

բաշխվել այդ ցուցերից, այլ ամօթխածութիւնից
չէ յայտնում իր ցուցերը և տանը փակվում է:

ՆԱԽԱԿ ԱՌԱՋԻՆՈՒՅԻՑ

Մարտի 11-ին

Շատերն ինձ խորհուրդ են տուել վաղ գալ
լրագրից, և չը զրկել մեր քաղաքի չարն ու բարին,
որովհետև դրանով աւելացնում եմ հակառակորդ-
ներիս թիւը: Բայց պատերազմի դաշտում մար-
տնչուղ զինուորը,—թէ յաղթողը և թէ կործնից
մեծնողը հաւատար պատկանից են, վատը քամակ
գարձնողն է. ուստի ինձ համար նուիրական
պարտք համարելով ճշմարտութեան ճակատա-
մարտի մէջ մտնելը, քանի դուրս է դրիս պիտի
գրեմ անաչառապէս առանց ծածկվելու զիմակի
տակ:

Եւ ինչպէս լուել:

Կան շատ քաղաքներ, որոնք միմիայն եկեղե-
ցու գանձանակադարմի և մոմալաճառութեան
արդիւնքներով կառավարում են զպոլսոյնը:
Փառք Աստուծու, որ մեր զպոլսոյնը ազատ են
այդ ճակատագրից, նրանց նիւթականը ազատ-
ված է և. փրկիչ եկեղեցու անշարժ կառուածնե-
րի եկամուտներով, իսկ եկեղեցու ներքին ար-
դիւնքն ամբողջապէս ուղարկվում է վիճակային
կոնսիստորիան: Միմիայն և. փրկիչ մոմալաճա-
ռութեան, գանձանակադարմի և կրպակների ար-
դիւնքը հասնում էր մի քանի հազարներին, իսկ
այժմ չնորոյժ ներկայ երեսփոխանի անհոգ կա-
ռավարութեան, մէկ-երկու հազար անդամ չէ
ստացելու: Եւ ինչու համար այդպէս չը պիտի
լինի, քանի որ երեսփոխանը խռովելով եկեղե-
ցուց, ուխտ է արած այնտեղ ոտը չը կտնուել, (և
հաստատ է մնացած իրովտիւն). ահաւասիկ եր-
կու տարի կը լինի, որ օրերով պէտք է ո-
րոնել նրան, եթէ մինը կարօտութիւն ունենայ
քաղաք մօմ առնելու թէ պսակի, թէ ննջեցեալի
և թէ տան համար և այլն, քանի որ երեսփոխա-
նը հրաժարական տալով իր պաշտօնից, և հակա-
ռակ կոնսիստորիայի հրամանի՝ թէ յանձնել բո-
լոր հաշիւները տեղական հողեր կառավարու-
թեան մինչև նոր երեսփոխանի ընտրութիւնը,
նա ընդգրկմանում է մինչև այսօր, ոչ հաշիւ է
տալիս հաշուետեաններին, և ոչ էլ յանձնում դոր-
ծերը հողեր կառավարութեան: Ոչ որին յայտնի
չէ նրա նպատակը և ոչ որ էլ չէ հետաքրքրվում
պահանջներու. դրա հետեանքն այն կը լինի,
որ եկեղեցին պիտի տուժէ նիւթականապէս մին-
չև ամպերի կուտակվելը:

Եւ ինչպէս լուել:

Քաղաքի բարեկարգութեան վրա հողագործը—
քաղաքային ինքնավարութիւնն է. բայց արի
տես, որ մենք այնքան ընդունակ ենք ինքնավա-
րութիւն ժառանգելու, որ հողար անդամ երանի-
նք տալիս ղէպուտատական ժամանակներին,
քանի որ այն ժամանակ ոչ քաղաքի պարտքն էր
լեռնացած և ոչ մեծամեծ հոգսերով ծանրաբեռն-
ված ինչպէս հիմա: Եւ ինչու համար այդպէս չը
պիտի լինի, քանի որ «խնամութիւնը» տարա-
ծում է իր զօրեղ բազուկները, և «խաթը» մեծ
ղեր է կատարում թէ ընտրութիւնների ժամանակ
և թէ զործելու: Առաջարկի մի միջոց քա-
ղաքի բարեկարգութեան կամ յօդուտ կասայի,
եթէ այդ առաջարկութիւնը հաճելի չէ մեր
վարիչներին,—նրանք տարիներով պահում են
արիւթում, մինչև խոչըդոտներ և արգելքներ
գտնելը այդպիսի արդար և իրաւացի պահանջ-
ների դէմ, հետեանքը սառեցնում գործելու և ո-
ւանդ ունեցողներին: Բաւական է ասել, մինչև
անգամ հրաւիրում են իրաւասուններին ժողովի,
գալիս է մինը և միւսը իրաւասուններից և գրա-
նում են վարչութեան տան մէջ մի դրապիւր և
երկու ծառաներ, սպասում են ժամերով, չեն
յայտնում ոչ քաղաքագլուխը, ոչ քարտուղարը և
«լուսնները թօթվելով հեռանում» (այդպիսի մի օ-
րինակ պատահեց փետրվարի վերջերում):

Եւ ինչպէս լուել:

Արդէն յայտնի է, որ թղթի վրա դրուելուն
ունի Ախալցխայում Բարեգործական ընկերութեան
բաժինը, թղթի վրա եմ ասում, որովհետև գործ-
նականապէս գոյութիւն ունենալը քաղաքին ընդ-
հանրութեանը յայտնի չէ: Իր բացման առաջին
տարին զարտնագողի սկսվելով միմիայն 27 բա-
ժանորդ ունեցաւ, այնուհետև աստիճանաբար ա-
ճելով հասաւ. մինչև 100: Եթէ տարւոյ ընթաց-
քում նրա գործունէութիւնը սահմանափակվում

էր մի կամ երկու որդեգիրներ պահելով Ներսի-
սեան դպրանոցում, իսկ անցեալ տարւոյ գորգա-
գործութեան փորձն ապարդիւն անցաւ, հետեա-
լար և բաժանորդների թիւը աստիճանաբար նը-
ւազելով ցածացաւ. մինչև 20—30: Գորգագործու-
թիւն տարածել ինքն ըստ ինքեան մի օգտակար
ծառայութիւն է, բայց գործի աջողութիւնը
կախված է նիւթական միջոցների քանակութիւ-
նից, իսկ 30 բաժանորդով և մի քանի բուրձի
դրամագլխի տոկոսով (ուրիշ աղբիւրներ կտրված
են տեղական բաժնի համար) արհեստանոց կա-
ռավարելը հանաք բան չէ: Այդ կէտը ի նկատի
ունենալով, վաղուց և շատերից ցանկացած մի
ընթերցարան ունենալը աւելի օգտակար համա-
րելով և ընկերութեան միջոցներին համապատաս-
խան ծախս պահանջելով, պատիւ ունեցայ տե-
ղական բաժնի վարչութեան ուղղել հետեալ դը-
րութիւնս, որի պատճէնն ամբողջապէս կցում եմ
նամակիս Բանասէր ընթերցողը կարող է դատել
թէ որպիսի չնորհալի անձնաւորութիւններ են
մեր գործողները և ըստ այնմ պահանջել նրանցից
գործ և արդիւնք:

«Բարեգործական ընկերութեան տեղական բաժ-
նի ընդհանուր ժողովում, որը կայացաւ ամսիս
24-ին (յո՛ւնվարի), ի միջի այլոց ներկայացվեցաւ
և վարչութեանը կազմած նախաձեռնութիւնը, որը, ա-
ռանց մանրամասնութիւնների մէջ թախանջելու և
քուէարկութեան, հինգ ձայնով, չորսի հակառակ-
ընդունվեցաւ. վաւերացնել նախաձեռնութիւնը Բայց ո-
րովհետև Բարեգործական ընկերութեան տեղա-
կան բաժնին իր հաստատութեան օրից մինչև հիմա
չէ կարողացել գրեւէ յինչն ընդհանուր հայ-հա-
սարակութեան ուշադրութիւն և համակրութիւ-
նը, ինձ, իբրեւ յինչեւ ընկ. անդամի, հաճելի է
ներկայացնել վարչութեանը հետեալ առաջար-
կութիւնս, որպիսին խոնարհաբար խնդրում եմ
յանձնել ընդհանուր ժողովի խորհրդածութեանը,
եթէ վարչութիւնը բարեհաճի հրաւիրել մի այդ-
պիսի ժողով անպաշար:

«Գորգագործութեան արհեստի վերաբերեալ
ծախսերը, որոնք բաժնում են ընդհանուր ծախսի
գումարի մէջ մի պատկանելի թիւ և որպիսի
ծախսերը» հիմնված անցեալ տարիների փորձերի
վրա, չէ կարողացել ներկայացնել մի չօչափելի
արդիւնք, այդ նպատակի համար յատկացրած
գումարի անբաւարարութեան պատճառով, ուստի
աւելի նպատակայարմար չէր լինի, գորգագործու-
թեան համար յատկացրած գումարը գործածել մի
այլ նպատակի, թողնելով գորգագործութեան
մասին կարողադրութիւնն անորոշ ժամանակի,—
մինչև բաժնի բարդեղէն իր ֆինանսական դրու-
թիւնը, հետեանքը կարողանար արդիւնաւոր ծա-
ռայութիւն մատուցանել յինչեւ արհեստի տարած-
մամբ:

«Առ այժմ բանալ հասարակական գրադարան-
ընթերցարան Այդպիսի հանրաշահ ձեռնարկու-
թիւնը, որ անշուշտ մի զօրեղ արձագանք է տա-
լիս Բարեգործական ընկերութեան լաճնի դոյու-
թեան մասին, հաւանական է, ապագային աւելի
մեծ թւով բաժանորդներ գրաւելու համար, գուցէ
և մեր, ապագայ արդիւնքի գումարը բազմա-
պատկվելով կարելի լինի ընդարձակ գործի ձեռ-
նարկելու:

«Գրադարան-ընթերցարան բանալու խնդիրը
թէպէտ նոր չէ, սակայն անհրաժեշտ է Ախալ-
ցխայի նման հայաշատ քաղաքի համար, որ զրկ-
ված է մի այդպիսի բարոյական և բազմաղիւն
հիմնարկութիւնից. հետեանքը Բարեգործական
ընկերութեան տեղական բաժնին իր անուան ար-
ժանավայել բարութիւն արած կը լինէր քաղա-
քիս, որի (ընկ.) գլխաւոր նպատակներից մին
լուսատրութիւն տարածելն է, և այլն»:

Ահա և վարչութեան գրած պատասխանը.
«Համաձայն օրադրական եղբայրացութեան վե-
րադրանքի մակագրութեամբ սոյն յայտարարու-
թիւնը ըստ պատկանելոյն վարչութիւնս յայտ-
նում է, որ ինքն արդէն ձեռնարկած լինելով
գորգագործութեան արհեստի տարածմանը, հաս-
տատակէս որոշած է կատարելագործել տալ քա-
ղաքի ցանկացող ուսանողներին մէջ, իբրեւ
ամենայարմար միջոց վերջիններիս համար օրա-
կան պարէն հայթայթելու: Վարչութիւնս լիովին
կը ցանկանայ ունենալ և ուրիշ բարենպաստ
հիմնարկութիւններ, ի թիւս որոց և գրադարան-
ընթերցարան, սակայն նրա նիւթական միջոցը
երբեք և երբեք թոյլ չի տայ ունենալ երկու հիմ-
նարկութիւն: Աթէ դոմնում է մի քարեպաշտ
անձնաւորութիւն, որ նիւթական ապահովաց-

նում է մի այդ տեսակ գրադարանի գոյութիւ-
նը, յայն դէպս վարչութիւնս ամենայն սիրով
յանձն է առնում բաց անել և կառավարել: Գա-
լով սոյն յայտարարութեան մէջ յինչեւ տեղական
բաժնին իր հաստատութեան օրից չէ կարողացել դը-
րաւել յինչն ընդհանուր հայ-հասարակութեան ու-
շադրութիւնն և համակրութիւնը» միւսաւորական
խօսքերին՝ վարչութիւնս ցաւելով համառօտիւ
պատասխանում է, որ այդ միմիայն անհեռատե-
սութեան պտուղ է: Վարչութիւնս ընդմիշտ վա-
րկած է և վայելում է հասկացող դատակարարի
կողմից լիովին համակրութիւն, միմիայն ճշմա-
րիտ է, որ լոկ մի անձնաւորութեան հաճելի լի-
նելու համար երբեք թոյլ չէ տուել իրան մէկի
բնահաճութեան համաձայն չարքիւլ (թիւ և ստո-
րագրութիւն նախագահի և քարտուղարի № 4):
Վարչութեան պատասխանից յայտնվում է «որ
ինքը (միմիայն ինքը) արդէն իր որոշմամբ» յա-
նելու է այն, ինչ որ կամենում է: Վեթիկն ընդ-
հանուր ժողովում վարչութեան նախահաշիւն ամ-
բողջապէս ընդունվելու համար բողոքող «նոյն
ինքը»—վարչութիւնն էր, իսկ հինգ ձայնի հա-
կառակ չորս ձայնը պատկանում էր լոկ ան-
ղամբերին», որոնք քիչ շատ ծանօթ լին վարչու-
թեան գործունէութեան:

Իսկ յայտարարութեանս մէջ յինչեւ թէ «բա-
ժինը չէ կարողացել գրաւել յինչն հայ-հասարա-
կութեան ընդհանուր ուշադրութիւնը և համա-
կրութիւնը» բառերը միւսաւորական համարելը չը
զիտեմ որի կողմից «անհեռատեւութիւն» է: Ա-
խալցխայի հայ-հասարակութիւնն առնուազն տա-
ւրն և երկու հազար հաշիւով, գոմարն ենք, որ
միակ Բարեգործական ընկերութեան համակրող
35 անձինք են, իսկ միւսները 11,965-ը անհաս-
կացողներ:

Վերջապէս ցանկալով ամենայն աջողութիւն,
պիտի կրկնեմ «Գործք քոյ արգարացուցին ըզ-
բեզ»:

Ա. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՊԵՐ

Ստացանք ՆՈՒՔԱՅԱՋՏԻՑ յօդուտ ղէյթունցի-
ների 25 բուրլի, որ գոյացել է այդ քաղաքում
եղած թաւորական ներկայացուցից:

Մեզ գրում են ՄԵՂԻՆ զիւղից որ այդտեղ
աստիկ տարածված է կարմրուկ հիւանդութիւնը:
Հիւանդանում են և հասակաւոր մարդիկ: Բազ-
դաւորապէս հիւանդութիւնը բազմաթիւ ղէպե-
րում վտանգաւոր էլք չէ ունենում:

ՄԵՂԻՆԻՑ մեզ գրում են մարտի 9-ից, որ այդ-
տեղ եղանակները դարձնաւային են և դաշտային
աշխատանքները արդէն սկսված են:

Մեզ գրում են ՊԵՏԵՐՈՎՈՐԳԻՑ որ առաջիկայ
ապրիլի 30-ին ուսու հասարակութիւնը կը տօնէ
նշանաւոր ուսու բանաստեղծ Ա. Մալկոլի յօրե-
կանը:

Պարկաստանից ստացած մեր մի մասնաւոր
նամակից իմանում ենք որ այս տարի ձմեռը
Պարկաստանում բաւական լաւ անցաւ. և շատ
քիչ ձիւնեց: Մարտի 8-ից սկսած եղանակը ար-
դէն կատարելապէս դարձնաւային է դարձել:

Կրօնական «Русск. Полонник» ուսու չաքա-
թաթերթը հաղորդում է որ Կովկասում մտադիր
են շուտով հիմնելու 3 միսիոնարական կենտրոն-
ներ, ղլխաւորապէս այն տեղերում, որտեղ ուղ-
ղափառութեանը ամենից շատ վտանգ է սպառ-
նում օտար պրօպագանդայից՝ կաթոլիկների, բո-
ղոքականների, բապտիստների և մալականների
կողմից: Միսիոնարները կընտրվեն աստուածաբա-
նական բարձր ուսում ստացած, մի և նոյն ժա-
մանակ տեղական լեզուներ իմացող մարդիկ:
Նոյն թիւթը հաղորդում է որ «Կովկասում ուղ-
ղափառութիւն վերականգնեցնող ընկերութիւնը»
իր ուսուհմարաններ թիւ 25-ից շուտով շատաց-
նելու է մինչև 50 հատ, և առհասարակ ընկերու-
թիւնը ղիտաւորութիւն ունի ընդարձակ իր
գործունէութիւնը:

Պարկաստանից մեր ստացած մի մասնաւոր
նամակից տեղեկանում ենք, որ մարտի 4-ին
Գալիլէի հայոց զպոլսի թաւորական դահլի-
ճում, ղիկավարութիւնում պ. Ա. Աւագեանցի, կրի-

տասարդ թաւորաւորները ներկայացում տուցին
յօդուտ Գալիլէի ազգային հայոց ընթերցարանի
խաղաքին «Սև հողեր» ողբերգութիւնը, որի նիւ-
թը վերցրած է լէնկիթէնների դէպի Հայաստան
արած արշաւանքների ժամանակներից և Մօլիէրի
«Պուրսօնիակ» կատակերգութիւնը: Վերջինը թուր-
քերէն լեզուով ներկայացվեցաւ, որպէս զի տեղա-
յի թուրքերին հասկանալի լինի: Համակարգին
աւելացնում է որ ներկայացումը լաւ անցաւ և
դահլիճը լի էր բաղմունքով: Անտրակտներում
ածում էր ղիտաւորական երաժշտութիւնը:

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են «Այստեղի ղեղատե-
րը, մեր կարծիքով, շատ թանկ են ծախում ղե-
ղերը: Ունենալ հիւանդների համար, ի հարկէ, զգա-
լի չէ ղեղի համար բարձր գին վճարելը, բայց
ցանկալի է որ գոնէ հասարակ ժողովրդի համար
տրվող ղեղերի վրա գնեք փոքր ի շատէ իջեց-
նէին մեր ղեղատները»:

ԵՋՄԻԱՇՆԻՑ մեզ գրում են, որ բարեկեցիկ
չորեքշաբթի օրը քէֆ անող երիտասարդները
արձակելիս են լինում ղէյթունցիներից. գնտակնե-
րից մէկը պատահամաբ դիպչում է մի տղային և
սպանում է նրան:

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են հետեւեալը
«Ռուսաստանից այստեղ եկած գործարանատէրե-
րից մէկը շուտով ձեռնարկելու է այստեղ մի
գործարան շինելու: Մէր կոչված տեղում, բաւ-
բաւից զանազան տեսակ ապրանքներ գործելու
նպատակով: Մի այլ գործարանատէր ղիտաւորու-
թեան ունի մակարօնի և պատրաստելու հա-
մար մի գործարան բանալ: Այդպէս, եթէ փոքր
առ. փոքր միւս գործարանատէրերն էլ սոյնաման
գործերին կը ձեռնարկեն, մեր երևանցի հայ վա-
ճառականներին կը մնայ միայն միջնորդներ
դառնալ դրանց և ղիւղական արդիւնաբերողների
մէջ»:

Ինչպէս մեզ հաղորդում են Երևանից, մարտի
11-ից, քաղաքի ղլխաւոր փողոցներով այժմ ղըծ-
ած է լինում անց ու դարձ անել թողի պատճա-
ռով: Թղթակիցն աւելացնում է թէ քանի մի օր
է արդէն որ սկսել են փողոցների հողը հաւաքել,
բայց դժուար թէ այդ բանը օգնէ քաղաքացինե-
րին անտանելի թողից ազատվելու:

«Новости» լրագիրը հաղորդում է որ այս օրե-
րս պիտական խորհրդի մէջ քննվեցաւ վարանո-
ւորի (ապրանքների գրաւականով փոխաւորու-
թիւն տալու) հարցը: Լրագիրը կարծում է որ
այդ հարցը կը վճռվի մինչև ամառը:

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է
մեզ Տաքանթոգից, որ նաւագնացութիւնը բացված
է արդէն և մարտի 16-ից սկսվեցաւ նաւերի բեռ-
նելը:

ԱՌԱՋԻՆՈՒՅԻՑ մեզ գրում են, որ այդ քաղա-
քում կազմված մասնաժողովը Զէյթունի հրկի-
զեաներին նպատակելու, հանդիմանակեց 536 թ. դու-
մարը, որը արդէն ուղարկվեցաւ թեմական ա-
ռաջնորդին «Ախալցխայի միջոց պատրաստ է բա-
րեգործութիւն անելու, աւելացնում է թղթակիցը,
եթէ լինեն գործին ղիկավարող բարեխիղճ ա-
ռաջնորդներ»:

ԱՍԻԱԲԱՍԻՑ ստացանք հետեւեալ նամակը:
«Փետրվար ամսից սկսած Ասիաբաքում կատա-
րեալ ամառնային եղանակ էր անուան Շրջակա-
ների բուսականութիւնը արդէն սկսել էր կանաչել,
երբ յանկարծ մարտի 12-ին նորից սկսվեցաւ ձիւն,
զալ և եղանակը սաստիկ ցրտեց»:

Մեզ գրում են Ասիաբաքից և հետեւեալը: «Ինչ-
պէս լուում ենք, պէտք է շուտով դան մեզ մօտ
Բազուկ ուսաց թաւորական խմբի մի քանի
ղերասաններ, մեր քաղաքում ներկայացումներ
տալու համար: Մեզ համար դա, ի հարկէ, ուրա-
խալի է, որովհետև մենք վաղուց է արդէն որ
զրկված ենք որ և է թաւորական ներկայացու-
մից»:

ԳՕՐԻՍԻՑ մեզ գրում են «Այստեղ վաճառա-
կանութիւնը կատարելապէս ընկած գրութեան
մէջ է: Ինչ վաճառականին էլ ղիւղեք, մի և նոյն
զանգաւաններ կը լսէք նրա բերանից» առնուոր չը

carde» լրագրի յազմէն հրաւերներն և զրգուիչ ցոյցներն, այնու ամենայնիւ փարիզի փողոցներու մի առանձին ցոյց տեղի չունեցաւ և միայն մի քանի փողոցի խմբեր մի քանի անգամ «Կեց-ցէ՛ Բուլանով» կանչելուց յետոյ զրկեցան:

— Լուրերն նայելով, մինիստր Պետկովսկիի փոխարէն կը նշանակվի Բետտինսկի:

— Իտալական պատգամաւորներ ժողովում խօսեցող Կառալարովիան ներքին և արտաքին ըստ-ըստականութեան մասին, մինիստր-նախագահ Կը-րիսպի յայտնեց, որ Իտալիան խաղաղութեան կողմն է, որովհետեւ նա ցանկանում է զբաղվել զլիաւորապէս իր ներքին բարեփոխութեան զոր-ծով:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսական մամուլը առհասարակ մեծ հա-մակցութեամբ է վերաբերում դէպի գերմանա-կան նոր կայսրը: Փարիզի «Republique Francaise» լրագիրը, ի միջի այլոց, պատմում է հետե-ւեալը Ֆրիդրիխ կայսրի կեանքից, երբ որ նա թագաժառանգ էր և Ֆրանս-գերմանական պա-տերազմի ժամանակ գերմանական զորքի մի մա-սի հրամանատար էր: Ֆրանսիացի զինուորի ա-ռաջին խումբը բերում են գերմանական բանա-կը, պրինց Ֆրիդրիխ, չըջապատված իր զենքալ-ներով դիմադրում է նրանց: Այն օրակներ, երբ զինուորը անցնում են հրամանատարի առջև, Ֆրիդրիխ իշխանը հանում է զինարկը և դիմելով իր զենքաներին, ասում է նրանց. «Կարո՞նք ինչ-որ բան գլխաւորները հանեցէք, պէտք է յարկը և ուղղունը թշնամու ըստ զինուորներին իրանց ձախարկութեան մէջ»:

Յայտնի է, որ Ֆրիդրիխ կայսրին բժշկում է բժիշկ Մէլենդի: Բերլին գալուց ի վեր բժիշկ Մէլենդի ստացել է բազմաթիւ սպառնալի նա-մակներ: Կայսրը հրամայել է ամեն միջոց ձեռք առնել բժշկին աղատ պահելու համար որ և է ան-հաճող դէպքերը:

Վիեննայի «Presse» լրագրի խմբագիր Յանգ, որը նորերս վախճանվեցաւ, թողել է 40 միլիոնի կարողութիւն:

Նորերում Պետերբուրգի հաշտարար դատա-րանները մէկուս ընկնում մի վարսավիրի (պա-րիկմաներ) զործը, որը միջադրվում էր ինք-նազուրկ զործողութեան մէջ: Այդ վար-սավիրի մօտ գնում էր միշտ մի պարոն՝ երեսը ամբիւրէն համար Նա իւրաքանչիւր անգամ չէր վճարում վարսավիրին, այլ վճարում էր մի քանի ամսվանը միանգամայն: Կըրկին անգամ պարոնի պարտքը 50 րուբլի դարձաւ: Վարսավիրը ան-դադար խնդրում է պարոնից վճարել այդ փողը, բայց նա միշտ ուշացնում էր, ասելով որ փող չունի առ այժմ: Մի անգամ նոյն պարոնը եկաւ ամբիւրէն երեսը և խոզելու մտքերը. վարսավի-րը նստեցրեց նրան, երեսին ըսեց սպասե՛ք, դէմքի կէտը ամբիւրէն և կանխեց:

— Ինչո՞ւ չէք շարունակում, ասեց զարմանքով պարոնը:

— Բաւական է վերջապէս, պատասխանեց վա-րսավիրը, վերջապէս պէտք է տանք ձեր պարտքը, թէ ոչ: Խանութի մէջ եղողները ծիծաղ բարձ-րացրին. պարոնը կատաղեց, բայց ի հարկէ ոչինչ չէր կարող անել:

— Փողի դէթ կէտը տուէք, ասեց վարսավիրը, և ես կը վերջացնեմ:

— Այո՛ ինչ լրբութիւն, այս ինչ աւաղակու-թիւն է, գոռաց վրբաւորված պարոնը... սրբեցէք սապոնը:

— Երբեք, կարող էք գնալ և փողոցում լուանալ ձեր երեսը...

Կրկին ահազին ծիծաղ: Ճարանատված պարոնը հանեց և քան հինգ րուբլին վճարեց, իսկ մնա-ցածի համար ստորագրութիւն տուեց: Վարսա-վիրը շարունակեց ամբիւր իր պարտադանի դէմ-քը, և ինչպէս հարկն է վերջացրեց և ճանապարհ դնելով ասեց.

— Ներեցէք, խնդրեմ, մի բարկանաք, մենք ձե-րի չենք աշխատում...

Բարկացած պարոնը դանդաղակեց դատարանին, բայց ինքը դատարան չը գնաց և այդ պատճա-ռով զործը դադարեցրին:

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՄՈՐԻՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 16 մարտի: Պետական կառուա-նոր մինիստրութիւնը մշակում է մի պայմանագիր, որը պէտք է կապվի օտար պետութիւնների հետ, Ռուսաստան եղջիւրաւոր տուաւ մտցնելու վերա-բերութեամբ, ժանդարմ կամ ուրիշ վարակիչ հի-ւանդութեան տարածելու առաջն առնելու հա-մար: Կորէայի, Նապոլիի և Չինաստանի նա-ւահանգիստների մէջ նաւերի կանոնաւոր երթիկ-կութեան կատարելը վճարված է յանձնել մամուլաւոր ձեռնարկողներին, յատկապէս այն մարդուն, որին կը յանձնարարէ Ամերիկ չըջանի գնեցրալ-նա-հանգապետը:

ՅԱՐԻՑԻՆ, 16 մարտի: Յարկերի մօտ Վոլգայի սառուցը հալեցաւ:

ՎԻԵՆՆԱ, 16 մարտի: Ռուսաց դեսպան Լօրա-նով-Ռոստովսկի արձակուրդ ստանալով ուղևորվեց Պետերբուրգ:

ԲԵՐԼԻՆ, 16 մարտի: Ասում են, որ Ֆրիդրիխ կայսրին կը մղի (մասով կանխ) ռուս բժիշկ Յա-րկովսկիին:

Կ. ՊՈԼԻՍ, 16 մարտի: Գեսպան Նելիզով նո-րից յայտնեց դիպլոմատներին և թիւրքաց պե-տական գործիչներին, որ այն լուրերը, որոնք տարածված են ռուսաց զորքերը հարաւային նա-հանգներում կենդանացնելու մասին, կատարելա-պէս սուտ են:

ԲՈՒԽԱՐԵՍ, 16 մարտի: Մինիստրութեան հրա-ժարականի վերաբերեալ լուրերը սուտ են: Արա-նից յետոյ, առանց ընտրութեան, կը կալանա-ւորվին այն բոլոր անձինք, որոնք ցոյցներին մաս-նակցում են, նոյն իսկ պատգամաւորները: Ըն-դիմադրական կուսակցութիւնը ժողով է գո-ւարում բողոքելու համար:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 17 մարտի: «Новое Время» լրագիրը հարցրեց, որ նորերս ուղարկվելու է Հռօմ, պապի մօտ, արտաքին գործերի մինիստ-րութեան մի պաշտօնեայ՝ Լոլօյսկիին, Հռօմի պա-պի հետ բարեկամական յարաբերութիւններ հաս-տատելու և պայմանագիր կապելու, որքան կա-րելի է Ռուսաստանի համար ձեռնառու կերպով: Լոլօյսկիան տրված են հրահանգներ նոյնպէս և ներքին գործերի մինիստրութիւնից:

ՓԱՐԻՉ, 17 մարտի: Սենայի դեպարտամենտի ընտրողներին ուղղած իր նամակի մէջ, Բուլանով չնորհակալութիւն է յայտնում իր օգտին տուած ձայների համար, դրա հետ միասին այն միտքն է յայտնում, որ այդ ձայնատուութեան զլխաւոր նպատակն էր ցոյց անել յօգուտ ազգային պաշտպանութեան և երկրի ամբողջութեան պահ-պանութեան, և բողոքել պարլամենտի գործա-դրական իշխանութեան ֆալստորներ թուրութեան դէմ, այլ և այն բամբասանքների դէմ, որոնք ուղ-ղված են հանրապետական զինուորի դէմ, որը երբեք ոչինչ համար չէ մտածել, բայց եթէ հա-րկները պաշտպանութեան համար վերջում Բու-լանով յայտնում է, որ թէկ իր պաշտօնադրել լինելու պատճառով ինքը կարող է պատգամաւոր ընտրվել, բայց և և այնպէս առ այժմ հրաժար-վում է ընտրվելուց, որովհետեւ չէ ցանկանում այն մրցողների տեղը բռնել, որոնց հետ միա-սին,— ոչ թէ նոյնա հակառակ,— իր անունը դըր-ված էր ընտրողական ցուցակներին մէջ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 17 մարտի: Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը վճռել է լուսա-ցնել Մարիամբուրգի ջրանցքի օբստակը, որի հա-մար որոշված է 4 1/2 միլիոն Ալխատանքների ժա-մանակամիջոցը հինգ տարի է նշանակված:

ՎԻԵՆՆԱ, 17 մարտի: «Neue Freie Presse» լրագրին հետադրում են Սօֆիայից, որ կարավե-լովի օրդան «Տիրութայի Սահմանադրութիւն» լը-րագիրը կրեթիկայի է ենթարկում այն իշխանի դէմ բարձրանալը, որը, զանազանի ճակատակ, այլ և չը նայելով պետութիւնների անհամաձայ-նութեանը, եկաւ Բուլանով, և որի զոլութիւնը Եւրօպան չէ ընդունում, որի պատճառով և Բուլա-րայի դրութիւնը աւելի վատացաւ: Ռուսաց կա-մ թիւրքաց զորքերին դիմադրելու միտքը լրագիրը համարում է ծիծաղելի:— ամենից առաջ փող չը կայ. երկրորդ՝ հրապարակի վրա կը դըր-վի Արևելեան-Բուլանովայի բաղդը. քայի դրանից բողոքական զինուորները չեն կամենայ կու-լի Ռուսաստանի՝ իրանց բարեբաղի դէմ: Լրագիրը այն երազակցութեանն են դալիս, որ փրկու-թեան համար մի միջոց է միայն մնում, այդ է, որ բողոքական կառավարութիւնը պէտք է զիջանի Ռուսաստանին:— Իր բարեբաղին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 18 մարտի: Աշխարհագրական ընկերութեան խնդրելի հիման վրա թաղաւոր կայսրը Բարձրագոյն հրամայել բարեհաճեց նա-հանգել Պոտանիին, որ Մոնպոլիայում և Չինաս-տանում էր ճանապարհորդել, ամբողջ կեանքի համար թոշակ, տարեկան 800 րուբլի:

ԲԵՐԼԻՆ, 18 մարտի: Այստեղ շարունակում են թէ մամուլի և թէ հասարակութեան մէջ երախ-տագիտութեամբ խօսել թագաժառանգ Զեսարե-վիչի ազնիւ և ասպետական գործունէութեան ե-դանակի մասին: Մանաւանդ սրտաշարժ տպաւո-րութիւն գործեց թագաժառանգի վարմունքը հանդուցեալ կայսրի դազադի մօտ, թագաժառանգ Զեսարեվիչ: 20 րօպէ շարունակ կանգնած էր մերկացրած սրով դազադի կողքին, միւս օֆիցեր-ների և աստիճանաւորների շարքերում:

ՎԻԵՆՆԱ, 18 մարտի: «Corresp. de l'Est» լը-րագրին Բերլինից գրում են, որ կայսրի նախա-դատութեամբ ուրբաթ օր կայացած մինիստրա-կան խորհրդի ժամանակ իշխան Բիսմարկ բա-ցատրելով արտաքին ըստգրականութեան պրօ-գրամը, որ կայսրի կողմից հաւանութիւն էր ըս-տացել, ասեց որ Գերմանիան ձգտում է խաղա-ղութեան պահպանելուն և կը պաշտպանի Ռու-սաստանը դաշնակցութեան սահմաններում, առանց վնասելու աւստրիական շահերին: Մնաւով Աւա-րիային հաւատարմի, Գերմանիան ցանկանում է մի և նոյն ժամանակ հաճելի լինել Ռուսաստանին:

ՍՕՖԻԱ, 18 մարտի: Բուլանով բաւական ծանր անկարգութիւններ տեղի ունեցան, որովհե-տեւ ժողովուրդը մերժեց տուրքերի վճարելը: Թիւրքիան զորքեր կանգնեցրեց Արևելեան Բուլ-լանի սահմաններին վրա: Բողոքական կառավա-րիչները այդ մասին բացատրութիւն են պահանջել:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԻՎՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԲԱՅՅԻԻ

„ՄԱՄՈՒԷԼ“

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՊԻ

Առաջին, երկրորդ և երրորդ դրքը, մի մեծ հատորի մէջ ամփոփված:

ԳԻՆՆ Է 3 ՐՈՒԲԼԻ

Օտարաբարաբայից պէտք է ուղարկեն նաև 50 կօպէկ ճանապարհի ծախսը: Վաճառվում է հեղինակի մօտ, այլ և «Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանո-ցում»: Հեղինակի հասցեն. ВЪ ТИФЛИСѢ. Апопу Меликѣ-Акопану (Раффи). ВЪ Редакцію „АРЦАГАНКЪ“.

6—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, մարտի 24-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շողնաւոր, նաւապետ ԲՕՇԵԼ (BOSCHEL) գլուխ կը դնայ Բաթումից. դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմբոլլուի տան, Նաբերեժնայա, և Թիֆլիսում նախկին Ար-Տրուշի գալլերեում, № 103.

2—2

ԻՍԿԱԿԱՆ ԳԱՆՁ

Է կազմում այն զգալիների համար, որոնք գտն են եղել անբարոյականութեան, բժշկա-պետ ԲԵՏԱՌԻ ԳԵՐԵՐ

«ԻՆԲԵՆԱՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ»

Ռուսաց հրատարակութիւն, 3 պատկերնե-րով, զինք 1 րուբլի:

Թող ամեն մարդ, որ տանջվում է սարսա-փելի արտաքին հետախնդրից, կարգայ այդ գիրքը. նա աղաւթը շատերին հաստատ կո-րուտից: Մի րուբլի ստանալուց յետոյ Լէպլիգի Բ. Ֆ. Բիւրէյի հրատարակողի մա-գաղինը ուղարկում է գիրքը ցանկացողնե-րին: Հասցեն՝ Germania (R. F. Bierey's Verlags-Magazin Leipzig).

(Շ) 9—50

Въ редакціи газеты „МШАКЪ“ прода-ются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д.—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oeko- nomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien- ein Vortrag von Dr. Grigor Arzruni, über- setzt von Amiranjanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающие получить бро- шюры, благоволят присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру. Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“.

(Շ)

ՎԵՌՆԵՃԻ ԶՄՈՒՌԻ ԵՒ ՓԱՅԼԱՆԵՐԿԻ

ԿՈՎԿԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Սրանով պատիւ ունի յայտնելու պ.պ. առևտրականներին և վեճերի (յակ), դմուռի և փայլաների (պոլիտոսթա) գործաճողներին, որ ունի յիշեալ ապրանքների բոլոր տեսակները, որոնք յետ չեն մնում միւս գործարաններից, ինչպէս իրանց կատուէ-րի գնով, այնպէս էլ իրանց լաւ յատկութեամբ: Պատուէրները ընդունվում և կատար-վում են անմիջապէս:

ԱՊՐԱՆԵՐՆԵՐԻ ԳԱՐԱՅԵԼ ԵՒ ԿԱՊԵԼ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԱՄԵՆԱՑՆ ԻՆԱՄԲՈՎ ԳՈՐԾԱ-ՐԱՆԱՊԵՏԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՆԵՐԲՈՑ: Մանրամասն պայմանները նշանակ-ված են պրէյս-կուրանտի մէջ, որը արվում և ուղարկվում է ձրաբար: Օտարաբարա-բայիցներին պահանջները կատարվում են ամենայն ճշգրտութեամբ և անյապար: Գործարանը և պահեստը գտնվում են Երզրաւիտիսկի փողոցի վրա, տուն Ջիթախեանի, № 25: Հասցեն. Тифлисъ, Самуи́лу Леонте́вичу Ходорскому.

15—20 (Շ)

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ԳԵՐԱՊԱՏԻԻ ՀԱՅՐԵՐԻ ԷԼԻԿՍԻՐԸ

ՍՈՒԼԻԱԿ (GIRONDE) ԱՐԲԱՑՈՒԹԻՒՆՑ

Այդ էլիկսիրը հնարել է 1373 թւին վանհայր ՊԵՏՐՈՍ ԲՈՒՐՍՈ:

Այդ էլիկսիրի մի քանի կաթիլներն ամենօրեայ գործածութիւնը պահպանում է առաջնորդ փչանալուց, տալիս է նրանց սպիտակութիւն, ամրացնում է լինդը-րը և թարմացնում է բերանը:

Բացի էլիկսիրից ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ հայրերը պատրաս-տում են զարձեալ ԱՍՍՄՆԱԲՕՇԻ և ՊԱՍՍԱ առաջնոր-սրելու համար, որոնք նմանապէս կարելի է ձեռք բե-րել ամեն փոքր ի շատէ նշանաւոր դեղաներում, ինչպէս և դեղատան ապրանքների պահեստներում ու պարֆիւմերական մագաղիներում:

ԳԼԽԱՌՈՐ ԱԳԵՆՏ SEGUIN, BORDEAUX, rue CROIX de SEGUEY, №106.

6—30 (Շ.)

ԽՈՒԼԵՐԻ ՀԱՄԱՐ

Մի անձն, որ մի շատ հասարակ միջոցով ապավեց խլութիւնից, որ տեւեց 23 տարի, պատրաստ է անվարձ ուղարկել այդ միջոցի նկարագրութիւնը բոլոր ցանկացող-ներին: Հասցեն. Парижъ (Франція) 4- Rue Drouot, Dr. Nicolson, Paris.

4—5